ՅՈՒ.Թ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ
(1938–2023թթ.)

Երկրային կյանքին հրաժեշտ տվեց իմունաբանության, բջջի մոլեկուլային կենսաբանության և համաճարակաբանության բնագավառում նշանավոր գիտնական, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Թադևոսի Ալեքսանյանը: Նա Ռուսաստանի բնական գիտությունների, էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության գիտությունների միջազգային ակադեմիաների իսկական անդամ էր, Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ: 2007թ. Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության գիտությունների միջազգային ակադեմիայի կողմից արժանացել է «Գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչման և պարգևատրվել «Գիտնականի Աստղ» շքանշանով: 2003 և 2011թթ. վարչապետի կողմից պարգևատրվել է «Շնորհակալագրով»: 2013թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից պարգևատրվել է «Վաստակագրով»:

Ակադեմիկոս Յու.Թ.Ալեքսանյանը հաջողությամբ համատեղել է գիտական, գիտակազմակերպչական աշխատանքը և մանկավարժական գործունեությունը:

Երկար տարիներ ԵՊՀ-ում և Հայկական բժշկական ինստիտուտում վարել է իմունաբանության դասընթացը:

Յու.Թ.Ալեքսանյանը բազմաթիվ գիտական աշխատանքների (այդ թվում՝ հինգ մենագրության) հեղինակ է, տարբեր կոնֆերանսներում բազմիցս հանդես է եկել գիտական զեկուցումներով:

1986–2006թթ. նա եղել է ՀՀ ԱՆ Ա.Բ.Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծաբանության ԳՀԻ-ի տնօրեն, 2008–2018թթ.՝ «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի գլխավոր խմբագիր:

«Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրակազմը վշտակցում է Յու.Թ.Ալեքսանյանի հարազատներին ու մերձավորներին: